2. զՊարոն Գրիգորն Ասլանեանց Բաղուեցի օժանդակ նմին։

3. զՊարոն Հայրապետն Մարգանեանց Շամախեցի օժանդակ նոցին։

4. զՍահակ քահանայ Ծաղիան գեղջ՝ զոր կարգեալ եմ և գանձապահ հոգաբարձութեան։

Եւ 5. Նախագահ հոգաբարձութեան զվանահայրն Սաղիանի վանից՝ Ստեփաննոս քահանայն։

Հոգաբարձութեան կազմակերպելուց զկնի, և դպրոցը կարգի մէջ դնելուց և ուսումն սկսելուց յետոյ՝ յայտարարութեամբս 30 սեպտ. հմ. 258, աւետեցի Վեհ. Կաթուղիկոսին ի միամտութիւն վանական դպրոցի բացման մասին, և յայտարարութեանս օրինակն այսպէս է։

Հմ. 258
30 սեպտ. 1888 ի Շամախի

## Նորին Վեհափառութեան Սրբազնագոյն Հայրապետին ամենայն Հայոց Տ. Տ. Մակարայ

*Ցառաջնորդէ Հայոց Շամախւոյ թեմի*

### ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի միխիթարութիւն հոգւոյ Ձերդ օծութեան խոնարհաբար յայտ առնեմ, թէ ի կատարումն պաշտելի կոնդակի օծութեան Ձերոյ ի 6 ապրիլի տարւոյս հմ. 140, ի լինելն իմ ի Բաղու յամսեանն մայիսի՝ համաձայն Ձերդ յոդուածոյ կանոնադրութիւն Բուդաղեան վանական դպրոցին Սաղիանի վանից ընտրեցան յանդամութիւն հոգաբարձութեան այնմիկ դպրոցին Ա. պարոն Մովսէսն Բուդաղեանց և Բ. պարոն Գրիգորն Ասլանեանց ի Բաղու։

Դ. պ. Հայրապետն Մարգանեանց ի Շամախի։ Եւ Դ. Սահակ քահանայն Յոհաննեանց ի Սաղիան գեղջ, Նախագահ ըստ կանոնադրութեան վանահայր այնր վանից Ստեփաննոս քահանայն, որոց և ետու զհրահանգութիւն վարելոյ զպաշտօնն հա-